

Եւ երբէ հնչէր փող պատերազմի,
Ռուսք կը դառնային ժայռերը Սիսի.
Ամէն կուրծք՝ վահան, եւ բերդ՝ ամէն տուն,
Գետեր կը բանար շշուամի արիւնն:

Ժայռերու վըրայ, բերդերու ճակտին
Քանդակուած է միշտ անունը Սիսի.
Կը դառնայ աշխարհ, եւ նա կը հասնի
Մեր խաչն յանձնելու Աստուծոյ կրկին:

Ձ. - Լ.Ա.Մ.Բ.Ի.Ն

Դուն ալ անցար գերդ վերջին սէ՛րը մարդուն,
Ինչպէս երազն ոսկեգօծուած օրերուն.
Ու մերկ դաշտեր՝ բերկրանքներէն որբացած,
Զեն բարբառի, չեն յանձնուիր սրտերուն:

Դէմքեր բարի, դէմքեր չֆնաղ կոյսերու,
Մոլորաֆայլ լոկ ըստուերներ քողուցին.
Ո՞ւր հանդիպին աստղ ու լուսին իրարու,
Երբ ճանանչներ քախծութեան դէմ կը փշրին:

Աւա՛ղ, երբեմն էիր ինչպէս ոսկի գահ,
Փառքն էր բեհեգ, եւ շափիւղայ՝ դահլիճներ,
Զեռքն ձեռքի՝ հազար ծաղիկ կը սփռէր,
Կը ցոլանար աչք աչքի մէջ սիրաջեր:

Այնտեղ սուրբի մ'երկինք հասնող բազուկներ
Արշալոյսէն աւելի բոց ունէին.
Երկնքի մօտ ճգնարան ու պալատ էր,
Սիրելի վայր հարսանեկան երազին:

Ո՛հ, սե՛ւ օրեր, սե՛ւ տարիներ, սե՛ւ մարդիկ,
Որոնց մուրնի հարուածը դեռ կը լսուի.
Ու լակոտներ կը թնկնէրով ագռաւի,
Տէրն են հիմա աստուածաշէն Լամբրոնի:

(Շար. 2)

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՕՐԵՐՈՒՆ ԼՈՒՍԱՆՑՔԻՆ ՎՐԱՅ

Հ. ԵՂԻՍ ՎՐԳ. ՓԷՋԻՅԵԱՆ

Ա.

Թողած երկնի ճանապարհները փայլուն,
Թափառայած, ի՞նչ գործ ունիս այս տեղում,
Դեռ մինչեւ ե՞րբ հետեւիս ի՛մ ֆայերուն,
Տեսութեանդ կայք ըրած երազն խաբկանք:

Թո՛ղ աշխարհն այս, դարձիր աստղերն ու լուսին,
Կը լըրանան շուտով օրերս կեանքին հետ,
Կու գամ քեզի, կ'ըլլանք դարձեալ միասին,
Սուրբ Ղազարի կանքեղին լո՛յս վարդապետ:

Բ.

Տեսիլքիս մէջ՝ երիտասարդ էիր, քունդ,
Առոյգ՝ ինչպէս լեռան կաղնին քաւարծի,
Ծովն ափէ ափ կ'երգէր երգն իր խորանդունդ,
Ես՝ քու կողքին, անհոգ տըղեկն երբեմնի:

Միտքն ամէն վայրէ, սէրէ՛ լուսավառ,
Յիշեց նախ քեզ, դաշտավայր Սո՛ւրբ Զեմնեան,
Ուր դափի խաղն ընկերներուդ հետ կայտառ
Հոմերական կ'առնէր հըրայք մ'աննըման:

Այսպէս, միմակ, ծովուն առջեւ դող ի դող,
Հասնիլդ տեսայ, մեկնի՛լդ ապա դէպ երկին,
Այգաբացին կը տանէիր խուրճ մը շող,
Լոյսի՛ գաւակ Մըլիքարայ Հըրաշին:

Տեսիլքիս մէջ՝ երիտասարդ էիր, քունդ,
Առոյգ՝ ինչպէս լեռան կաղնին քաւարծի,
Ծովն ափէ ափ կ'երգէր երգն իր խորանդունդ,
Ես՝ քու կողքին, անհոգ տըղեկն երբեմնի:

Պրեկա - Խրուարստան
13 Օգոստ. 1966

Ա.ՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ